



ՏԱՆԹԷ ԱԼԻԿԻԵՐԻ

1265 - 1321



366-66

ՅԱՐԳԱՆՔ «ԲԱՆԱՍՏԵՂԾ» ԻՆ

Համաշխարհային տոնախմբության հանգամանք առաջանալով Սանթե Ալիկիերիի ծննդեան եօթնհարյուրամեակը: Իտալիա եւ Եւրոպայի գլխավոր կեդրոնները, գոյգ Ամերիկաները, միջին եւ հեռավոր Արեւելքը խանդավառութեամբ ճանաչեցին յիշատակով. որովհետեւ ան կը պատկանի քիչ մը բոլոր ժողովուրդներուն իր գործին նկարագրով: Հոն մարդն է որ կ'երգուի, մարդը նկատուած որպէս ստեղծեալ էակ, կապուած բնագոյնից Բացարձակին հետ: Այս պատմական կապը որ գոյութիւն ունի անհունի եւ հունաւորի միջեւ, էական կէտ մըն է, անոր մեծ եռաբանութիւնը «Դիոնիս - Բաւարան - Արեւելքի» հասկնալու համար:

Տանթի «Աստուածային կատակերգութիւն»ը, այս բառին մէջ իմանալով մարդկային սեռի ձգտումներուն, անկումներուն երգը, իր խորքովը բարոյագիտական-փիլիսոփայական-աստուածաբանական համադրութիւն մըն է, ոչ գուտ ձեւական ու վարդապետական բնոյթով, այլ բանաստեղծութիւն դարձած, վերացում եւ քրքրացում, հոգեկան ապրումներու համաճարագ, տեղադրուած անդրաշխարհի կայաններուն մէջ: Այս բանը կարելի եղած է հզօր երեւակայութեան մը շնորհիւ. այդ է դարձեալ որ փրկած է գործը անխուսափելի տափակութենէն, որուն մէջ պիտի իյնար ո՛ր եւ է ուրիշ բանաստեղծ, որուն երեւակայութեան թռիչքը չըլլար այնպէս հսկայական՝ ինչպէս Տանթիինը: Իրականին մէջ այս կատակերգութիւնը յաջորդներէն կոչուած «աստուածային» մակդիրով, ուրիշ բան չէ՝ բայց եթէ ապրուած, մեռած եւ երեւակայութեան ուժով յարութիւն առած մարդկային տոհմը, կեանքով ու յուզումով լեցուն:

«Աստուածային կատակերգութիւն»ը ծնունդ չէ միայն աստուածաբան, փիլիսոփայ ու բարոյագէտ մտքի մը. այլ համայնագէտի, որովհետեւ հոն կան բոլոր գիտութիւնները միջին դարու, մարդկային ամբողջ գիտելիքը, որ կ'ամփոփէր բնաբանականը, աստղաբաշխականը եւ ամէն ինչ որ կը ծառայէր տիեզերքը հասկնալու եւ գայն մեկնելու: Տիեզերագիտութիւնը իր Շարժիչ պատմառով, եւ պատմառեալ էականութիւնը բոլոր տարրերով, ներկայ է բանաստեղծին երգին մէջ, որ մեծ համայնականութեամբ

թեան մը ծիրին մէջ կ'ընդգրկէ աշխարհը, մարդը իր հոգիին եւ մարմնին կեանքով:

Տանթէի գործը, իր ժամանակին համար՝ էր նաև կենդանի, եւ ոչ թէ տեսական հանգամանքով միայն յայտնուած արտայայտութիւն մը. վասնզի ապրուած իրականութեան հետ կը պահէր իր ամենագգալի առընչութիւնը, անձնական դատումով և կրքի արտայայտութեամբ: Պատմական անցեալը, միջին դարը, իր օրերուն փառափառ եւ եկեղեցական կեանքը, հոն են, իրական դէպքերով ու դէմքերով, իրմէ ֆննդատուած, դատապարտուած կամ փառաբանուած: Այդ գործը չէ, հետեւաբար, պարզապէս երեւակայութեան մը ծնունդը կամ լոկ բանաստեղծական զբօսանք մը, անջատուած իրապաշտ ու զգացական տարրերէ:

Ուրիշ դիտելի կէտ մը՝ անոր անձնական բնոյթն է, շատ յայտնի կերպով շեշտուած ֆերքուածին առաջին տողերուն մէջ: Երիտասարդ, կեանքի մէջտեղը հասած, Տանթէ հեղեայաբար մ'ունի, որ կը տանջէ զինքը: Ան կը գտնէ ինքզինքը, ակամայ, ինկած կիրքերու եւ ախտերու անտառին մէջ, ալեծուփ, հսկայական երեւոյթ առած, այլաբանօրէն իրմէ ներկայացուած երեք մեծ կիրքերու ուժգին տիրապետութեան տակ: Այդ վիճակը իր վերջնական վերլուծումին մէջ՝ մեղքի վիճակն է, եւ որուն ծայրն է անկում, կործանում եւ յաւիտենական կորուստ: Զուտ անձնական դրդապատճառ մը կու գայ, այսպէս հիմնաւորելու ծնունդը եռաբանական ֆերքուածին: Մեղքը, տիրապետող գաղափարը կը դառնայ հոս: Մեղքը ոչ մարդկութեան միայն, այլ իր անձին, որմէ ձերբագատուելու միջոցը կ'ըլլայ յղացումը անդրաշխարհեան ուղեւորութեան մը: Անձնական բնոյթը Տանթէական ֆերքուածին կը տանի մեզ խորհելու «Մատեան ողբերգութեան»ի հեղինակին յղացքին, որ սկիզբ կ'առնէ դարձեալ մեղքէն: Բայց մինչ Նարեկացին հայեցողական, զուտ զգացական նուազանքով տարբադադրուած է, Տանթէ նկարագրական է հիմնապէս: Երկուքն ալ կ'ընդգրկեն համայն մարդկութիւնը, բայց տարբեր եղանակով մօտենալով անոր. աղաչական եւ աղօթական է Նարեկը. առարկայական, պատկերագրական ու պատմողական է «Աստուածային կատակերգութիւն»ը: Այս մերձեցումը խիստ համեմատութեան մը եզրեր չունի բնականաբար, այլ միայն բնդհանուր գաղափարին մէջ է որ կը գտնէ իր արդարացումը:

Տանթէ, որպէս կատար իմացական աշխարհի, անցեալ դարերու բոլոր գրականութիւնները, ժառանգաբար իր մէջ խտացուցած, կը տիրէ արուեստի եւ մտքի բոլոր համաշխարհային արտադրութիւններուն վրայ: Իր մէջ կայ անխուսափելիօրէն ինչ որ հելլէն արուեստն ու ֆաշական, ինչ որ լատին միտքը տուած էին իբրեւ գեղեցկագի-

տական փորձառութիւն: ԺԳ-ԺԴ դարերու հեռաւոր անցեալին մէջ, երբ Եւրոպական գրականութիւնները գոյութիւն չունէին, երբ դեռ իտալիա միջնադարեան մտայնութեան եւ աւանդական ձեւերէն անդին չէր անցներ, երբ ճշմարիտ բանաստեղծութիւնը, յետ դասականներու շրջանին կը նիքէր ամուլ եւ անկենդան, Տանթէ յայտնուեցաւ յանկարծ հանճարեղ ներգործութեամբ մը, կեանքի կոչելու ճշմարիտ ֆերքուորութիւնը, տեսաբանական ու հայեցողական նիգերէն ետքը:

Տանթէ իր տաղանդին ուժովը եւ իր գործին անժխտելի արժէքով կը կապէ հին եւ նոր աշխարհները: Հինը, որ յունական եւ լատինական դասականութիւններով սնած էր եւ ունէր իր առանձին մտայնութիւնները եւ առանձին արուեստը, եւ որոնք «Աստուածային կատակերգութեան» մէջ կը գտնեն իրենց վախճանը, բանալու համար դուռը նոր բնութեան, նոր ֆաշականներու եւ մէկ բառով՝ նոր հոսանքի արուեստին: Տանթէ նորութիւն մըն էր իր օրերուն համար: Իր ազդեցութիւնը, արդարեւ, եղաւ հզօրապէս ներգործիչ յաջորդ սերունդին վրայ, որ քանի մը դար ետք իրմէ պիտի ներշնչուէր: Տանթէի հմայքը իր օրերէն մինչեւ այսօր պահած է իր կենսունակ թարմութիւնը. գարմանալի երեւոյթ մը, որ կը բացատրուի անշուշտ իր երգին անդիմադրելի դիւրանքին զօրութեամբ:

Եթէ բովանդակ աշխարհի համար «Աստուածային կատակերգութեան» հեղինակը բացառիկ մտքի մը տիրականութեամբ, առարկայ եղած է հիացմունքի, իր երկրին մէջ, իտալիոյ համար, ան կը կազմէ անկիւնադարձ մը, գրական, իմացական եւ նաեւ լեզուական գիծով: Նախահայր իտալ գրական արտայայտութեան, բանաստեղծական լեզուին, տաղաչափական ոնին եւ ձեւին՝ ան հարթած է ֆաւրան երկրին մշակութային կեանքին: Տանթէ եւ իտալ լեզուն, էապէս զուգուած, գմայլելի միութիւն մը կը կազմեն: Իրմով է որ կը սկսի գործնականապէս բուն գրական իտալերէնը, եւ ատոր համար անսահման է սերն ու յարգանքը հանդէպ այդ մեծ Մարդուն:

Ասիական բոլոր, եւ Եւրոպական կարգ մը ազգերէ առաջ, շնորհիւ Միսիթարեանց, հայ ժողովուրդը մօտեցած է Տանթէի անգուգական գործին: Եթէ բովանդակ գիտակից աշխարհը կը խոնարհի այս մեծ Բանաստեղծին անմահ յիշատակին, անոնց հետ անբաժան Հայ ժողովուրդն ու Հայ Լեզուն, որ «Ընդ իս մուտք են ի փառափառ աղետաւոր» պիտի դարձուածով յաջողած է հայացնել արուեստագէտ Բագրատունիի գրչին տակ անոր դժուարին տողերը, կը բերէ իր սփանջացումի եւ յարգանքի բաժինը փառափառութեան Որբան իտալիոյ եւ անոր հանճարեղ Զաւկին Մեծն Տանթէի:

Հ. Մ. Ճ.